

ՄՇԱԿ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՕՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ Է Ք օ ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լիցուով.

Ցայտարարութիւնները համար վճարում են
խրաբանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տ է Լ Է Ք օ ն № 253.

«ՄՇԱԿ» ԼՐԱԳԻՐԸ

Օգոստոսի 1-ից մինչև տարվայ վերջը
կարժենայ ՀԻՆԳ ընթերցողին.

Դիմել Тифлисъ, редакция „Мшакъ“.

Այն անձինք, որոնք վճարել են մինչև

օգոստոսի 1-ը և ցանկանում են շարունակ

կել լրագիր ստանալը, թող հոգ տանեն

վարձուրդը յայտնելու այդ մասին խմբագրու-

թեանը, որպէս զի լրագրի առաքումը

չընդհատվի:

Մէկ ամսով բաժանորդ գրվել ցան-

կացողները վճարում են Մէկ ընթերցողին:

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ըն-

դունվում:

ԲՈՎԱՆԴԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Լաօսանի շրջանը.—Ներքին Տեսչութիւն.

Սօլիսայի դէմ. Ն. Պ. Յակոբի. Ներքին լուրեր.

—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շրջան.

Նամակ Ֆրանսիայից. Արտաքին լուրեր.—Հն-

դագործներ.—ՅԱՅՏՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԼԱՕՍԱՆԻ ՇՐՋԱՆԸ

III

Մենք տուինք տեղեկութիւններ պատե-

րագմով կողմերի դիրքերի մասին Լաօսա-

նի շրջանում:

P. C. լրագրի թղթակից Նեմիրովիչ-

Դանչէնիցի վերջին հեռագիրը հետեւեալն

է հաղորդում եւ պատմեց իր մասին:

Սալային մօտ մնացել են 20,000 հոգի

եւ պատմեցին: Նրանց թիւը աստիճանա-

բարձր է: Եւրոպացիները, շարժումներ կա-

տարելով դէպի ուղտակալ գոգերի թե-

ւականները, նպատակ ունեն փակել ուղ-

տերին «տալապակի մէջ»: Արեւելքում, Տայ-

գիլի գետի վրա, եւ պատմեցին իր

մարտերը: Սալայի շրջանում Գուրն անցնելու

համար: Այդ գործով զբաղված է եւ պա-

նակալն այն վայրը, որ գտնվում է Բեն-

սիլիսու աւանում: Նրանք շինում են ուժ-

կանգնած: Այդտեղից մինչև Մուկդէն 60

և մինչև Նանտայ կայարանը 40 վերստ

տարածութիւն է: Ամենուր է, որ եւ պա-

նակները դիտարկութիւն ունեն այդ

կամուրջներով շարժել իրանց գործերը

դէպի ուղտակալ բանակը:

Ի՞նչ է ներկայումս կատարվում Ման-

շուրայում:

Պատասխանելով այդ հարցին, «New

York Herald»-ի աշխատակիցը (տես II. B.)

ասում է, թէ ներկայումս պատերազմը

այնպիսի մի շրջանի մէջ է մտել, որ

պէտք է զգուշ լինել վճռական կարծիք

յայտնելու կողմ կողմերի գրութեան

մասին:

Ռուսական այն զօրաբաժինները, որոնք

մինչև այժմ պատերազմում էին Լաօսա-

նից դէպի արեւելք գտնվող տեղերում,

այժմ մօտեցել են այդ կենտրոնական

քաղաքին և ըստ երևոյթի տեղադրվել

են Անպիւն աւանի մօտ (գծագրական

մեր տուած քարտէզի վրա ցոյց են տըր-

ված թէ Անպիւնը և թէ վերելք յիշված Բեն-

սիլիսու աւանները):

Ի՞նչ վերաբերում է ուղտակալն այն

գոգերին, որոնք հեռացան Սալային շր-

ջանից, յայտնի է, որ նրանք շարժվել են

դէպի հիւսիս: Անցնելով մօտ երեսուն

վերստ, նրանք հասած կը լինեն այն գը-

ծին, որտեղից սկսվում են Լաօսանի ա-

ռաջապահ ամրութիւնները:

և վճռել են միասին առաջ գնալ և միա-

նալ Կուրոկիի գոգի հետ:

Եւրօպական քաղաքական մամուլի մի

քանի օրգաններ ենթադրում են, որ մի

երկու օրից յետոյ պէտք է սպասել վրձ-

նական ճակատամարտի: Ռուսական գը-

քը արդէն կենտրոնացած կը լինի գենե-

րալ Կուրօպատկինի ղեկավարութեան

տակ: Բայց նրա դէմ կանգնած կը լինեն

եւրօպական երեք բանակներ՝ պատրաստ

մէկը միւսին օգնութիւն հասնելու:

Կը լինի արդեօք ճակատամարտ թէ ոչ

—հա հարց, որ դժուար է նախօրոք

վճռել: Գուցէ գեներալ Կուրօպատկինը,

հաստատ մնալով իր նախկին ծրագրին,

տեղափոխի իր զինքերը դէպի հիւսիս-

բայց եթէ նա ընդունելու լինի մի այդ-

պիսի որոշում, անկասկած նա կը պայ-

թեցնի Լաօսանի մօտ եղած ամրութիւն-

ները և ուստիսի պաշարները:

Իրականութիւնը մօտեցրել է մեզ այդ

հարցի լուծմանը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽՈՒՆԴԱՅԻՆ ԳԵՄ

Սովից մեծնող երեխաների հայրը հաց է

զոգանում, նրան բանաւարում են:

Գողութիւնը գողութիւնն է: Այդպէս էին

մտածում հինքը, այդպէս են մտածում և այ-

սօր գուցէ բազմաթիւ օրէնսդէտներ:

Յուլիսի 26-ին Բագուի ոստիկանութեանը

յանձնում են 22 ֆուտոս ոչխարի միս: Այդ

միսը ծախու էր հանել իր խանութում տեղա-

կան ամենախոշոր մատակարարներից մէկը:

Մէկտի-Բագու Բագուի: Բնում են միսը:

Դուրս է գալիս, որ ոչխարը մորթված է ծա-

ծուկ, առանց սպանդանոց տանելու, առանց

քաղաքային վերահսկողութեան ենթարկվելու:

Այդ էլ ոչինչ է երևում է, որ ոչխարն արդէն

վարակված է եղել սիրիւրական ախտով (տես

«Մշակ»-№ 162):

Ի՞նչ է անելու, ընթերցող, մեր արդարա-

դատութիւնը, մեր դատարանը Մէկտի-Բագու

աղալին:

Պատասխանը պարզ է: 3, 10, դէ՛հ, ասենք

նոյն իսկ 25 ռուբլի տուգանք է ենթարկելու:

Այլան հարուստ է: Նա կը վճարէ այդ չնչին

տուգանքը և, «Ալլահ շուքր» ասելով, դուրս

կը գալ դատարանից՝ նորից մի քանի այդ-

պիսի ոչխարներ ու այժմ մորթելու, հիւանդ

ու սաստիկ անասուններ մի ծախելու:

Գրանդի իր զբաղմունք ծանրացնելու:

Թիֆլիսի բժշկական-սանիտարական վերա-

տեսուչ պ. Ստեփանեանը արանից մօտ երկու

ամիս առաջ ման էր եկել տեղական կօդու-

տերիաները, շարքերէններ և այլ ուսուցի-

ղէններ գործարանները: Նա ձեռքաւել էր

բաւական խոշոր քանակութեամբ գոնաւոր

կօնֆետներ, որոնց մէջ մարդկանց առողջու-

թեան համար ֆուստակը ներկեր ու այլ նիւ-

թեր կային—օրէնքով արգելված:

Ի՞նչ եղաւ արդեօք:

Ոչնչացրին ձեռքաւարված ապրանքները և

մի քանի ռուբլի տուգանք նշանակեցին տէրերի

վրա:

Կենքը լինէր է այդպիսի ամենօրեայ հակա-

ստութիւններով:

Մի տեղ սիրելիական ախտով վարակված

միս են ծախում, մի ուրիշ տեղ արդէն բաւա-

կան հոտած, մի երրորդ տեղ էլ միսը կամ

այժմ ծախում արու ոչխարի մի տեղ, եր-

րորդ տեղում խալ ու հոտած մրգերն են վա-

րակում, մաշում խոզի ազգաբնակչութեան

ստամոքսը, չորրորդ տեղում ներկերը, հինգե-

րորդում կեղտոտ ու գլուխի ճարպն են խա-

նում մարուք իւղի հետ...

րակութեան առողջութիւնը սխտեմատիքաբար

թունաւորող կեղծարարներին մի քանի ռուբլի

տուգանք են նշանակում:

Արդեօք այն է լինում, որ կեղծարարու-

թիւնն աճում, հրէշաւոր չափեր է ստանում:

—

Սօլիսայի սպանում է մեր երկրին:

Մարդիկ ցնցվել են, եռանդի եկել: Ամեն

տեղից լսվում են անվերջ ձայներ. այստեղ

այսքան ռուբլի յատկացվեց քաղաքի առող-

ջանքը, սանիտարական վիճակի բարելաւ-

մանը, մի ուրիշ տեղ մի այլ գումար, երրորդ

տեղում աւելի ևս շատ և այլն:

Միլիթարիզմն է, երբ ամեն օր աչքի են

անցկացնում Կովկասի բոլոր քաղաքներից

հասնող այդ լուրերը սանիտարական, առող-

ջապահական պայմանների բարեփոխութեան

մասին:

Ակամայ օրհնում են խօսքայի զարգացը

ուրուսականին, որ եկել ու մտրակում, ցնցում

է մարդկանց, հանում է մեղ մեր աւիական

քնից:

Սօլիսայի մի խարազան է. նա գալիս, 1—2

տարի հիւր լինում, բազմաթիւ զոհեր առնում

ու տանում է իր հետ, ինքն էլ անյայտնում...

Իսկ կեղծարարութիւնը: Նա մնում է. նա

մեղ մօտ է, մեր մէջ... նա աւիացու համար

միս ու արեւն է դառնել:

Կեղծարարութեան արած զօհերը լուս են,

անկախաբէ, սմէս ու փուս: Նրանց ոչ ոք չէ

նկատում, ոչ ոք չէ տեսնում:

Կեղծարարութիւնը հալ ու մաշ է անում

ազգայնականութեան առողջութիւնը: Նա հող

է պատրաստում համաճարակների համար:

Նրա պատրաստած հողը—ուսուցող, քա-

ղաքում ստամոքսի տէր մարդկանց մէջ ոչ

միայն խօսքայի, այլ և բոլոր հիւանդութիւն-

ներն առան զոհեր են տանում:

Սօլիսայից վախենում են, նրա դէմ կա-

տաղի կուս սկսում, հազարի ծախքեր անում:

Իսկ կեղծարարութեանը թողնում են հան-

գիտ, թէ և նա աւելի աւելի է, քան համա-

ճարակը:

Սօլիսայի դէմ կուսում միջոցների մէջ պէտք

է մտնի և կեղծարարութեան դէմ կուսել:

Սաժակ

Ն. Պ. ՅԱԿՈԲԻ

(Նամակ Օդեսայից)

Մեռաւ «Южное Обозрѣніе»-ի խմբագիր Ն.

Պ. Յակոբի: Նրա մահով Ռուսաստանի առաջա-

դիմական մամուլը կորցնում է մի վերին ա-

տիճանի աղբիւր և գաղափարական հրապարա-

կախօսի: Նա ղեկավարում էր «Южное Обоз-

рѣніе»-ն նրա հրատարակութեան առաջին օ-

րից: Այդ թերթը նրա գլխաւոր գործն էր:

Նրան էր նուիրում նա իր բոլոր ոյժերն ու

ընդունակութիւնները: Այդ թերթի կենսա-

գրութիւնն էլ հէնց կազմում է նրա վերջին

տարիների կենսագրութիւնը: «Южное Обоз-

рѣніе»-ն իր էութեամբ, իր հրաշալի, իդէա-

լական յօդուածներով ամբողջապէս նրան է

